

կենտէն, իլանը քէյփէյթէ իպլթիտար
ԴԵԼԵՆԴԵՆ ԿԵՐ :

ԳԵՏՐՆԻ ԼԵՐԵ Ի ԼԵ

ՏՕԲԹՕՐ ԺՕՂ. Պ. ԲԵՐԼԻՆԻԻՆԻ
Պիւթիւն Էւրոպայտա ետեւընը վէ Էտէլէ
պիտուէ օլան ԹՕԱԼԻԹ վէ ՏիիՉէնէ
տայիր մաթալարըն ումումի մէրքէզի
Dr. JOH. B. KLUGER
à Vienne, Kaernthnerstrasse, N^o. 34.
ՎԻԵՆԱՍԱ, ԲԱԷՐԻՆՔԵՐՍՏՐԱՍՏ, Կ. 34
ՍԿԻԹ-Էսթրիտէ Էճալտանէ
Մէդըրի ֆապրիգատան իսթէնիլէն
մահալլէ մալ Եօլլանըն :

ԳԵՏՐՆԻ ԼԵ ԻՅԻՆ 5 ֆրէնք գութուսու
ԵԵԻԶ ՊԵՆԱՍԸ Սուլու տիւզէն պօ-
կասը, 1 1/2 ֆրանք
ԹԱՊԻԻ ՊԵՆԱ 3 ֆրէնք գութուսու
Բ. Մ. Բ. Սուլուպօկա, 1 1/2 ֆ.
ԲԵՐԻՆՔ ԹՕԶՈՒ 2 ֆրէնք գութուսու

(Մէդըրի մալլէրին պէտէլի բէշի-
նան վիրիմէլի տիր, Մալի տէնը պաղ-
լամագ վէ սանտըլա դօլմագ իշին 1 1/2
ֆրանք) : 8

Մարտի 1, Խոստ : Էւրոպէն :

Սաթըրնայտա տըր իպլթիտար Սա-
դա Եօգուլունտա Պիպլիք ԵՆԻ խանըն
գարուսու Ետընտա վաղը 31 Նիւմբուր
մաղպատա :

Բայթիթաթըմըդտա Նիպալունտա վէ
Թէպլը պիր մագաղա պուլունմարը Էագ
դընտա տէրքեար օլան պիր Էճէմիլյէթ
մէպին, վէ Էճալինին պէտաղա տայիր շէ-
լէր իլթիթար իշին ճէմալի Էմիլյէթ Իս-
թի միւրաճամթ իլլէմէյի Նիլլէթ իլլէ, Ետ
միւլէլլունտա վէ դուրմանեար, շէՆիլմիլ
Նէր սընքի Էճալսինէ Եարար ուրթիտ
պէտաղ պլլէր, տայիմա Մանչիսթէրտ
ճէլլ իթմէլլիկէ դարար վիրմիլ տիր :

Մէդըրի պլլէր Նիպալունտա ֆիեթաթ
լար իւզլէ ոսթըրնագլար տըր :
Կիւմիլիլլունտա վէ դումանեար,
Էպլիլ մէմուր իթմէլ Էմիլյէլ, Էմիլա
մէլլունտէլ տայիր օլան մագաղա քիւլա
իտիլ, վէ Էճի Նէ դատար Էճի իլլ մա-
լէր վէ Էճիտէ Էճիլն ֆիեթաթ սաթիլլ
ճագ իտէ, Էճի բագալլըլ օլմեղլ պլլ
ֆիեթաթ մէլլէլիլլէլ տիր, Էճի մէճիլ
21 զլունտ, սլլընմագ տըր, վէ Էճի
պիր Թօրտան աղաղ պլլ վէրիլլէլ
տիր :

Էրմէլիլ բաթրիգիանէպի քէօշէլ
տէ Մօլաթաղ ճատտէսինտէ 30 Ն
լլն արունըն 40 արընք 6 բարմագ Է
զիւ օլուպ 80 արընք միւլք վէ 22 Ն
լլնը վագըթ, քէպիր սարնըմ մագ
վէ գուլուսու մէվմուտ, Թանդիմա
տալի վիրիլլիլ օլուլունտան, Թ
լէպլիլինէ ֆիրուլիլ օլունմագընտ
իլթիլլաղան Թալիլ օլանլարըն, Ե
ճուլար պալլունտա Բէշիլ բալա Թի
պէնիլին պարընտա Նօ 73 ԳԵՐ

շան Թովհանէսեանի ճառախօսութիւնները . որով հանդիսականաց գոհունակութիւնը գրաւեցին , « յիշեալ ճառերու օրինակը կուղարկեմ ձեզ հրատարակելու խնդրանք . բայց ոչ իբր թէ հրատարակութեան արժանի բան մը , այլ ի խրախոյս և ի քաջակերթութիւն յիշեալ ուսումնասիրող պատանեաց » :

Դարձեալ մէկ քանի ազգային երգերէն վերջը նախագահ հօր փոքրիկ յորդորը և օրհնութիւնը վերջ տուաւ հանդիսին . ամեն ներկայ գտնուողներուն սրտից մէջ քաղցր յիշատակ մը և փափաք մը թողլով ապագային մէջ աւելի փառաւոր կերպով տօնելու սոյն նուիրական հանգէսը :

Ձերդ

Բ. Բ. Համաձեռն

Հարք իմ և Տեարք ,

Ազգութեանց ասպարէզին վրայ իւր դիւցազուններովը երեւելի հանդիսացող թորգոմական գրոհի իւրաքանչիւր անհատի սրտին մէջ , հայրենասիրական սուրբ զգացումը արծարծող և անոր երակներուն մէջ կենսական ոգին բորբոքող , անոր երեւակայութեան առջև մտադրութեան արժանի գեղեցիկ յիշատակներ ներկայացնող բարեբաստիկ օրուան զուարթագին ծագումը , ինչ ներգործութեամբ որ ձեր բարեպաշտ կերպովը շարժելով , այս շքեղ յարկին մէջ հաւաքեց , նոյն ներգործութեամբ իմ զգացմանցս ալ ազդելով մտացս խորհարար գրգռեց և թոթով լեզուիս արտասանութեան զօրութիւն շնորհելով քաջակերթ ասպարէզ ելլել և ի դիմաց սիրասուն ընկերակցացս սրտին խորերէն բլրած ամէն պարտականութիւն պարտականող զգացումը ներկայացնել այսօր , թերութեանցս խոնարհաբար ձեր ներողամբ տութիւնը և հաճութեամբ ունեւորութիւնը խնդրելով ի խրախոյս համբալկիս :

Մարդս ի սկզբանէ բնական լոյս մը ունի , այն լոյսը մի միայն դաստիարակութեամբ կրնայ ամբողջ պահել , մարդըս ամբողջապէս՝ դաստիարակութեամբ կ'զանազանի միւս արարածներէն , դաստիարակութիւնն է որ մարդուս բարքը կը մաքրէ , կիրքերը կը թնկնուի մտաց իշխանութեան կ'ենդարկէ , բանական էակը մի միայն դաստիարակութեան շնորհիւ կրնայ իւր առանհուն էակն , առ մարդիկ և առ ազգքն ունեցած պարտքը լիովին ճանչել և անթերի կատարել :

Իսկ ասոր հակառակ անդաստիարակութիւնը ուրիշ բան չընէր մարդս բայց եթէ մարդաբան հրէշ մը . անդաստիարակութիւնը , մարդկային հոգւոյ զգացումները , ընկերական սիրոյ և քաղաքականութեան զրկելով՝ վայրենիութեան կը մղէ զմարդ . եթէ երկիրը առանց հերկելու և աղէկ հունտեր ցանելու բարի և օգտակար պլանուղ կարտադրէ , չդաստիարակուած մարդն ալ ողորդ խորհուրդ կը ծնի . ինչպէս որ երկրին խնքին բուսուցած փունջ ու տատակը կը քանդենք , անանկ ալ մտաց անպիտան նուստացողոյ խորհուրդները ճշմարիտ դաստիարակութեան ձեռք պէտք է խել , անոր տեղ բանականին պատիւ բերող և իւր էութիւնը հաստատող սկզբունքներ սերմանել , քուղաքական իրողութեանց մէջ անգամ անդաստիարակութեան ինչ աստիճան վիտակար ըլլալը կը տեսնուի . ազգ մը իւր խաղաղութեան համար օրինաւոր կռուովորութիւն մը հաստատել կուզէ , ժողովը կ'ընեն մէկ մասը դաստիարակու-

թիւն չունենալով ծուռ հայեցողութեամբ միապետութիւն կուզէ : Դաստիարակեալ մասն ալ իւր ուղիղ հայեցողութեամբն ու հեռատեսութեամբը ապագայն կը մտածէ և Սահմանադրութիւն կուզէ , ասիկէ բնականաբար խռովութիւններ յառաջ կուգան , ինչպէս որ մեր ազգին ալ անծանօթ չէ այս . ըսել է որ եթէ ազգ մը դաստիարակուած ըլլայ , համամիտ և համակամ կը գործէ ու կը յառաջանայ :

Ահա այսօր ալ դաստիարակութեան արդեանց յիշատակը մեր երեւակայութեան առաջ կը ներկայանայ :

Գնա , ո՛վ հայրենասէր , Աւարայր դաշտը , փութա տղմուտ գետին եղբւրք , մտադրութիւնդ հոն անոր վրայ յարէ , ուր պիտի տեսնես սա երկուքին մէկ մէկու դէմ պատերազմիլը . մէկ կողմէն վատ ու ազգատեսց Վասակ մը որ անդաստիարակութեան ծրարութեան բարութեամբը զարդարուած դիւցազնական վարդան մը , կրօնի և ազգութեան սիրովը վառուած , մէկ մէկու վրայ կը յարձակին արժւոյ նըման , ամպերու մէկ մէկու զարնուելուն պէս իրարու զարնուելով կայծակ մը կը հանեն , որով մէկը կը խորտակի և միւսը անմահ կը մնայ : Այն վրասմ դաստիարակութիւնը որ այսպէս վարդաններ , վահաններ , Արամներ և ուրիշ շատեր կը ծնի :

Ո՛հ . . . ինչ վաճաճ ոգիներ էին անոնք , որք զարնելով աբեան ճապաղեաց մէջ լողալով աշխարհի մը ազատութեան նահատակներ հանդիսացան կենաց անդորրութեան և ազգի մը վերակենդանութեան պատճառ կանգնեցան , որով ազգասիրութեան և հայրենասիրութեան յաւերժական արձան մը կանգնեցին մարդկան սրտին վրայ : Ինչ ահա այս զգացմամբ եկեղեցին ալ փառաւորապէս տօնեց այսօր դիւցազնին վարդանայ և անոր ոգւով վառուած արի նահատակաց յիշատակը , որոնք իրենց ընդունած դաստիարակութեան շնորհաւոր կերպով պատասխանեցին , և թէ ապագային մէջ իրենց անունը անմահացուցին :

Մենք ալ՝ որ այսօր անոնց յիշատակաւն հոս ժողոված ենք , չբաւականանաք միայն յիշատակին անմոռաց ունեւոր , փութանք անոնց չաւրին հետեւելու . խրախոսինք հայեր , ըստ որում մեզ ալ ուրիշ բան չպակսիր նոյն յաղթանակը ձեռք բերելու , բայց եթէ կամք և փոյթ , որոնցմէ դեղաբուած զօրութեամբ կը կարողանանք որ և իցէ խոնդոտ առաքելու կ'ստիւլ , Անոնցմէ աւելի գերազանցը գործելու պարտականութիւնն իս յիշենք : Թող բերկրին մեր նախնեաց ոգիներն ալ տեսնելով որ իրենցմէ աւելի գերազանցը գործելու ճիգն ունին իրենց ողորդին :

Թող հայն ալ ճանչնայ դաստիարակութեան արժէքը , որպէս զի երջանկութիւն մը ճաշակէ : Ներիցէք համարձակութեան հարք իմ և տեարք , և ուրախութեամբ զուարթացէք . որ ջանքերովդ ապագային չեն ելլեր , այլ այնպիսի աշակերտներ կ'մատուցանեն , որոնք այժմէն կ'պարտաւեն չարքէն և կը պատուեն բարիքը : Այո՛ , մարդ ենք մենք ամեն էակներէն աւելի կարօտ դաստիարակութեան . ո՛վ է արդեօք մեզ մատակարարողը . մեր դաստիարակը , մեր ապագայն ապահովապէս լաւցնող արմին մը . թէ աշխարհի և թէ երկնքի մէջ մեր երջանկութիւնը ճարտարապետող հանճար մը : Բայց

ինչ բանի կուգայ այն բարերար ձեռքերն ու հանճարները եթէ պակսի իրեն օգնական ձեռք մը . խրախուսանք ի գործ շարժող , ինչ բանի կուգայ հոգին արգաւանդութիւնը ու յարմարութիւնը . եթէ պակսի երկնքի կենդանացողոյցից ցօղն ու անձրեւը , դուք էք , ուրեմն արդոյ հանդիսականք այն օգնական ձեռքը , որ միահամուռ պիտի խրախուսէ թէ մեր սիրելի դաստիարակը և թէ զմեզ . դուք էք այն ցօղն ու անձրեւը , որ պիտի կենդանացնէ մեր հոգւոյ մտաց հունտերը . մենք ձեր ապագայ սերունդը պիտի կազմենք . մենք ձեր անուան անմահութեան ջանադիրներն ու կենդանի տիպարներն պիտի ըլլանք . կուզէք մեր այս անկեղալութիւնը , մեր այս երեւակայած շքեղ ապագան ջնջուի մեր մտքէն ու սրտէն . կուզէք որ մեր հայկական գեղեցիկ տրամագրութիւնը խանգարի ու ապագային եղծանի ձեր ջանքին զլացմամբ : Կտրեցէ՛ք ուրեմն այս ձեռքը որ ասոնք գրեցին , սանձեցէ՛ք այս լեզուն որ ասոնք կ'իտարի . ապա թէ ոչ կարգաչեմք որ ձեր զաւակաց դաստիարակութեանը աշխատիք , բունեցէ՛ք մեր ձեռքէն առաջ նորդելու հոն , ուր լուսաւորութիւնը օրինաց թաղուհոյն հետ իր արժողութեամբ է , այս է մեր միակ փափաքը :

Ձեմ ուղերթիւսօքս վերջացնել առանց յայտնելու արդոյ հանդիսականաց որ սիրասուն ընկերակցացս սրտերէն բերթաւ խորին շնորհակալութիւնները , որ աղիւ եռանդով վառուած փութացիք ձեր նուիրական պարտաւորութիւնը կատարելով պատուել այն հանդէսը , և ձեր ինքնով քաջակերթ վարժարանիս սանունքը :

Ո՛ն , ուրեմն միանանք և միաձայն գոչենք . կեցցէ՛ ազգ Հայկազան :

Մտաւոր Համարձակութեան Աշակերտ Նորրորդ դասու Ս. Վարդանայ վարժ :

Աղիւ հանդիսականք

Ձեր սովորական մարդասիրութեանը ազաւորներով , պարտ անձինս համարեցի ձեզն հետ վայրկեան մը խօսիլ . հրաչէկ սիրտս կ'առաջնելու համար , որոյ ներողամիտ ըլլալիդ սերտանց կը փութամ վաղձալ :

Պարոնայք

Գանի քաղցր են և անուշիկ այն զգացումները , որ մտաւորական զգացմանց զարգացման արդիւնք կը բերանուրէր և ողորդել կը ջանայ , այն է ուսմունքը , մարդս գոհարազատ զարգացող էակ մը , մանուկ մը , երակացը մէջ հայտ . տիւն կողմ պատանի մը և երիտասարդ , չէ՛ որ իրենց նախնեաց աշխարհիս մէջ յետազօտած և խուզարկած ուսման տերեւախիտ և արգասաւոր ծառի մը պէս ծաղկիլը պիտի բաղձայ ի բոլոր սրտէ : Ահա այս պիտ'ըլլայ հայու մը և հայուհոյ պըսակաւոր յաղթանակ , այս է անոր դարերէ ի վեր փնտռածը , մանաւանդ որ արդի լուսաւոր և ճշտագրայթարձակ կարող , մեր հայկազնեայց փութալն աշխատութեամբ փնտռած նին հիմա մեզի ազատօրէն վայելել աւայ առջև կը նետէ :

Ինչ է այդ պարտաւոր և սնտի վիճարանութիւններ , Հայեր , մի՛ այդչալի . . . վասն զի ձախարհութիւնը չը յուսացուած ժամանակ , մեզ պիտ'անհետացնէ՛ ժամանակս շուտով կ'անցնի ալ երբէք չը վերագառնալու միտք , պէտք է զայն ի բարին գործածեմք . անթու աշխատութեամբ և

գիշերափառ տընութեամբ . դպրոցներուն յառաջադիմութեան համար պէտք է որբալոր հանդիպող դժուարութեանց յաղթեմք :

Խօսքս ձեզ պիտ'ուղղեմ , բուրաստանէն զարգուելիք՝ անուշաբոյր ծաղիկներ , զի անհրաժեշտ է ինձ համար և անհնարին , որ այսպիսի անզուգական պարագայիս մէջ , ձեր հետն ալ առանց վայրկեան մը խօսելու լուսութեան մեքենայից թելերը խորտակիմ :

Ձեր մատաղ հասակ , ձեզ պիտ'ուսուցանէ հայրենեաց սյրեալ դաշտերը ծագկապակ հիւսել , ահա ճիշդ ձեր հասակին ժամակն է , չըլլայ որ սնտի զրաղմանց հաճոյքներէն որսուելով , զայն զոր անկարելի իմն է երկրորդ անգամ ձեռք առնել շնչութեան անգութ հեղեղներուն առջև նետելով , այն բուրաստանին նորաբոյս ոստերը վշալից անտառներուն առջև նետէք , որովհետեւ ժամանակին անոր հերձուանքները պիտի վայրենեք :

Պատանիք , ձեր ժամանակները խիստ թանկագին են և հազուագիւտ մի՛ գուցէ այն պատեհ առիթը ձեռքէ փոխեցէ՛ք . շուտով , ինչու կ'ապասէք փութով դպրոց վաղեցէք : Ձի հոն է , և հոն պիտի գտնաք ձեր արեւել հոգիներ ծիրանփայլ գունաւորող լոյսը ահա հոն կը ծնի , ո՛հ , արդեօք ո՛ր մեղրակալ լեզու և շուրթն հայոց համար աւետանց լուր մը դպրոցներուն զարդացմանց և յառաջադիմութեանց նշաններ պիտի ցոյց տայ . պատանիք քաջաբար կուտեցէ՛ք կոյր տգիտութեան դէմ , ինչպէս որ անընդունելի է և անխորթ ձախողութիւն , նոյնպէս ալ անխորթ է և սիրելի յաջողութիւն :

Ներեցէ՛ք պարոնայք պիտի վերջացնեմ , սակայն առանց վայրկեան մը ալ խօսելու կարող չ'եմ սրտիս բաբախման առարկայն զգալ , մարդս չէ կարող արտասուաց հեղեղներն արգելուլ , երբ որ ո՛հ ցաւալի վիճակը , քաղքիս մէջ օրհարգեալ գոհացողոյց դպրոցի մը դեռ արժանացած չ'ըլլալին կը նշմարուի , այս մասին մեր թշուառութեանը հորիզոնը անհուն է , զրկել զօրիորդս ի պայծառ լուսոյ իրապէս կարեկցութեան արժանի օրիորդք . զի դուք էք որ պիտի գեղազարդէք երիտասարդաց սիրտ , դուք պիտի լուսաւորէք նոյա խաւար երկրէն և պիտի քաջակերթ , դուք էք որ անոնց պիտի ներշնչէք սիրոյ նորաբոցողով արմատներ , դուք պիտի թափանցէք նույա դաշտեանց խոր , վերջապէս դուք որ պիտի արծարծէք և ցանէք անոնց սակեփայլ սրտից մէջ եղբարաւորութեան անուշաբոյր հունտը , այս բոլոր առաքելութեանց ալ մեքենան չէ՛ որ ուսման և գիտութեան տօնավաճառ դպրոցնէ , ինչ կ'ապասէք այս աշխարհէս . . . ահա նոյն բուրբալ ձեզի համար կազմ և պատրաստ պիտի գտնէք խնայեցէ՛ք մի միայն ձեր ծաղիկ հասակը գիտէ՛ք որչափ սուղ է ձեր այդ պատանեկութիւն , վերջը զգլում է , բայց անօգուտ ծառ , չենք աբող զայն այն ատեն դառնել :

Հիմակու հիմակ տյալափա բաւական համարելով կը խոստանամ ձեզի հետ ժամանակին երկար խօսիլ :

Նշան Ս. Քարա Գոհանէսեան

ՍՏԷԻՊ Գ. ՍՏԷԻՊԱՆ
ԿԱՐԱՍԵՆ Յ. ՓԱՆՈՍԵԱՆ

Գալթատա Բենձլիպոյն բազմաբնակ
Նոյն 29 իրաի խոնքնտա :